



# ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԲՈԼՈՐԻ ՀՁՄԱՐ

## ՀՁՍԱՆԵ ԼՒՈՒԹՅՈՒՆ

Մարդու վրա կենտրոնացված նախագիծ, որը քվեարկությունը դարձնում է հեշտ, օգտագործողի համար, հարմար և բոլորի համար հասանելի:

Los Angeles վարչաշրջանի քվեարկության նոր փորձառությունը նախատեսված է լինել ինտուիտիվ և հասանելի բոլոր քվեարկողների համար: Նորարարական փոփոխությունները բոլոր քվեարկողներին տրամադրում են քվեարկության գաղտնի և անկախ փորձառություն, որը հեշտ և հարմարավետ է՝ անկախ նրանց տարիքի, մասնագիտության, հաշմանդամության կամ լեզվի:

### ՃԿՈՒՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ



Քվեարկողները կկարողանան քվեարկել վարչաշրջանի տարածքի քվեարկության որևէ կենտրոնում մինչև 11 օր տևող ընտրությունների ժամանակահատվածում: Քվեարկության կենտրոնների բոլոր քվեարկության սարքերը ամբողջովին հասանելի են:

### ՓՈՂԳՈՐԾԱԿՑՎԱԾ ՆՄՈՒՇ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ (ISB)



ISB-ն հարմարավետ տարբերակ է քվեարկողների համար, ովքեր ցանկանում են նախօրոք նշել իրենց ընտրությունը տանը՝ օգտագործելով նախընտրելի գործիքներով իրենց անձնական սարքը: ISB-ն ստեղծում է Քվեարկության անցաթուղթ (Poll Pass)՝ օդանավի անցաթղթի նման: Քվեարկության կենտրոններում քվեարկողները սկանավորում են Քվեարկության անցաթուղթը՝ իրենց ընտրությունները BMD-ին փոխանցելու համար: Դրանից հետո, նախքան իրենց քվեաթերթիկն հանձնելը, նրանք կարող են ստուգել և փոխել իրենց ընտրությունը:

### ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՆՇՄԱՆ ԳՈՐԾԻՔ (BMD)




BMD-ն օգնում է քվեարկողներին հարմարացնել իրենց քվեարկման փորձառությունը իրենց կարիքներին: Քվեարկողները կարող են փոփոխել BMD-ի կարգավորումները, ներառյալ ծրագրերի համակարգի հակադրությունը, տեքստի չափը, էկրանի անկյունը և ձայնի բարձրությունն ու արագությունը:

Օգտագործողի ծրագրերի համակարգի չորս ռեժիմները օգնում են քվեարկողներին գաղտնի և անկախ քվեարկելու գործում:



#### Հպում

Օգտվեք հպումով էկրանից




#### Հպում + Աուդիո

Օգտվեք հպումով էկրանից և լսեք ձայնային հրահանգներն ականջակալների միջոցով



#### Վերահսկիչ + Աուդիո

Օգտվեք շոշափելի վերահսկիչից՝ բրայլի պիտակներով և կարգավորվող լարով և լսեք ձայնային հրահանգներն ականջակալների միջոցով



#### A/B կամ Երկակի անջատման պորտ

Օգտագործեք Ձեր անձնական սարքը Օգտագործելով օժանդակ տեխնոլոգիական սարքերի համար մատչելի պորտը՝ տեսեք բովանդակությունը էկրանի վրա և լսեք ձայնային հրահանգներն ականջակալների միջոցով

